CENTRO STUDI E DOCUMENTAZIONE DELLA CULTURA ARMENA

Միլան, 4 -5 -2020

Հարգելի տկն. Խաչատուրյան

Շնորհակալություն Երերույքի տաճարի և հնավայրի հանդեպ ձեր հետաքրրության համար: Հայկական մշակույթի ուսումնասիրման և վավերագրման կենտրոնը (CSDCA մշակութային ժառանգություն) հետաքրքրված է եղել հայ ճարտարապետության այս գրավիչ գոհարի ուսումնասիրրության և պահպանման խնդրով սկսած պրոֆ. Ալպագո Նովելլոյի Հայաստան կատարած առաջին առաքելությունից:

1970 թ. սեպտեմբերին պրոֆ. Ալպագո Նովելլոն՝ Միլանի պոլիտեխնիկական համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի երրորդ առաքելության շրջանակում տաճարի և նրա շրջակայքի քննություն իրականացրեց: Առաքելությունը կազմակերպվել էր տեղական կառավարման մարմինների և ճարտարապետ Արմեն Զարյանի աջակցությամբ: Ալպագո Նովելլոն և իր գործընկերները հավաքագրել են բարձրորակ լուսանկարներ, պատմական տեղեկություններ, ինչպես նաև Շ. Ազատյանի և Յու. Թամանյանի կողմից կատարված հետազոտությունները:

1977 թ. իտալերեն, անգլերեն և հայերեն հրատարակվեց ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ շարքի 9-րդ հատորը՝ ամբողջովին նվիրված Երերույքին, տեքստերը գրել են Փասկալ Փափուճյանը, Ադրիանո Ալպագո Նովելլոն և Տիգրան Գույումջյանը:

1989 թ.՝ երկրաշարժիչ անմիջապես հետո, մի խումբ իտալացիներ փրկարարական առաքելությամբ այցելեցին Երերույք և երկրաշարժից տուժած այլ 18 հուշարձան: Խմբում ընդգրկված էին Ա. Ալպագո Նովելլոն (Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոն և Միլանի պոլիտեխնիկական համալսարան-առաքելության ղեկավար), Ռ. Բալլարդինին, Ջ. Կրեացցան, Ֆ. Լաները, Ֆ. Դոլիոնին, Ջ. Զանիոյանը (Վենետիկի ճարտարապետության համալսարան-ինստիտուտ), Վ. Բառչելլոնին (Ջենովայի համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետ) և Ջ. Կրոչին (Հռոմի ճարտարագիտության ֆակուլտետ):

1989 թ. սեպտեմբերին Վենետիկի (պրոֆ. Զանիոյան) և Ջենովայի համալսարանները (պրոֆ. Տորսելլո) կազմակերպում են տաճարի ուսումնասիրման աշխատանքներ: Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը՝ Միլանի պոլիտեխնիկական համլսարանի հետ համատեղ, համաձայնագիր է կնքում Հայկական հուշարձանների պահպանության կոմիտեի հետ՝ Երերույքի տաճարի և Մարմաշենի վանքի պահպանման նպատակով և սկսում է իրականացնել առաջին կառուցվածքային հետազոտությունը և քարե նյութերի վերլուծությունը:

1995 թ. Հուշարձանների պաշտպանության համաշխարհային հիմնադրամը Երերույքն ընդգրկվում է վտանգի տակ գտնվող մշակութային հուշարձանների ցանկում և առաքելություն կազմակերպում, որպեսզի Երերույքի տաճարի պահպանության վերաբերյալ ծրագիր մշակվի: Հայկական հուշարձանների պահպանության կոմիտեն

20145 Milano, via Cherubini 6 +39 335 8010108 – 30123 Venezia, Dorsoduro 1602 – 30123 (Italia)- CF 07872850156 ● P.IVA / VAT-No. IT02616820276

իտալացի մասնագետների է հրավիրում Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնից, որպեսզի նրանք միանան առաքելությանը: Գայանե և Արմեն Կազնատիները միանում են այս նախաձեռնությանը և Ջինոատա Ռիցիի աջակցությամբ կազմում են Երերույքի տաճարի ամրակայման նախնական նախագիծ:

2001թ Դեյվիդ Միքելմորը Երևանում կազմակերպում է ՅՈՒՆԵՍԿՕ-յի դոնորների ժողով, որտեղ Հայկական մշակույթի ուսումնասիրման և վավերագրման կենտրոնը ներկայացնում է Երերույքի տաճարի վերականգնման նախագիծը: Ցավոք նախագիծը չի ֆինանսավորվում:

2002-2004 թթ. Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնն իրականացնում է պատերն ամրապնդելու ուղղությամբ ամենաhրատապ միջամտությունները՝ հնարավորություն ստեղծելով հեռացնել ժամանակավոր մետաղյա հենարանը, որը կարող էր վտանգավոր լինել երկրաշարժի պարագայում (կառուցվածքային ինժեներ՝ պրոֆ. Վինչենցո Պետրինի, Միլանի պոլիտեխնիկական համալսարան, նախագծի ճարտարապետ՝ Գայանե Կազնատի և Մերի Դանիելյան, վերականգնող՝ Ստեֆանո Վոլտա, շինարար՝ Լևիկ Ղուկասյան, շին. հրապարակի աշխատանքների վերահսկող ճարտարապետ՝ Մերի Դանիելյան): Ծրագիրը ֆինանսավել է Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնի, Քարեղարանի, Իտալիայի արտաքին գործերի նախարարության և ԻԿՈՄՈՍ-ի կողմից:

2005-2006 թթ. Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը շարունակում է տաճարի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները՝ կազմակերպում և ֆինանսավորում, տեղագրական (Ի. Ռոմանացցի, Բարիի պոլիտեխնիկական համալսարան) և ստրատեգրաֆիկ (պրոֆ. Չ. Տոնգինի, Վենետիկի համալսարան, Ն. Մոնտեվեկկի) հետազոտությունները, ինչպես նաև քարի մակերեսների ուսումնասիրումը (Ժ. Բեսսակ, Ֆրանսիայի Գիտական հետազոտությունների ազգային կենտրոն) և կառուցվածքային պայմանների քննությունը (Պ. Ջաղոյան, ինժեներ-երկրաբան, գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող Հայկական սեյսմոլոգիայի և երկրի ֆիզիկայի ասոցիացիայում, Երևան):

2009-2016 թթ. Էքս-Մարսել համալսարանի Միջերկրածովյան միջնադարյան և ժամանակակից հնագիտության լաբորատորիան և Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը (Էքս ան Պրովանս) Պատրիկ Տոնապետյանի ղեկավարությամբ իրականացնում է տեղանքի բազմադիսցիպլինար հնագիտական հետազոտություն՝ համագործակցելով ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Շիրակի մարզի երգրագիտական թանգարանի (Գյումրի) հետ:

Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը համագործակցության պայմանագիր է կնքում LA3M-ի հետ, որով հավաստիացնում է տեղեկատվության փոխադարձ փոխանակում, ընդհանուր նպատակով 1. Խթանել տաճարի և հարակից հնավայրի մասին գիտելիքների խորացմանը և 2. ներգրավել միջազգային հիմնադրամերին՝ տաճարի փրկարարական աշխատանքներին:

2010 թ Տիգրան Քոումջյանի (Ֆրեզնոյի համալսարան) աջակցությամբ, Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը Երերույքի տաճարի պահպանման նախագիծը ներկայացնում է Գեթի հիմնադրամին: Այս և այլ ծրագրերի ֆինանսավորումը ծառայում է որպես լուծում տարաձայնություններին Գեթի

հիմնադրամի և հայ առաքելական եկեղեցու միջև: Ի վերջո հարցի շուրջ համաձայնություն է հաստատվել այլ միջոցներով և ծրագրին ֆինանսավորում չի տրամադրվել:

2011-14 թթ. Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը և Միլանի պոլիտեխնիկական համալսարանը մի թրեյնինգային ծրագրի շրջանակում Հայաստանում որոշ ուսումնասիրություններ են կատարում Անիպեմզա գյուղի և Երերույքի հնագիտական տեղանքի վերաբերյալ և գյուղի բարելավմանն ուղղված մի ծրագիր են մշակում: ԻԿՕՄ Հայաստանն իր աջակցությունն է հայտնում թանգարանի ստեղծման ծրագիրը կազմելու գործում:

2015 թ. Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը առաջարկում է ընդգրկել Երերույքը և նրա մոտակա Անիպեմզա գյուղը Եվրոպա Նոստրայի և Եվրոպական ներդրումների բանկ-ինստիտուտի «7 ամենավտանգված հուշարձան» ծրագրում:

2016 թ. Երերույքի հնագիտական տեղանքը և Անիպեմզա գյուղն ընդգրկվեցին Եվրոպայի ամենավտանգված մշակութային ժառանգության ցանկում: Ծրագրում ընտրությունը կատարելուց հետո Եվրոպա Նոստրան, IBEI-ն, Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը մասնագիտական առաքելություն են կազմակերպում դեպի Հայաստան հետևյալ մասնագետների մասնակցությամբ՝ տնտեսագետ, Եվրոպական ներդրումների բանկ-ինստիտուտի նախկին դեկան և Եվրոպա Նոստրայի փոխնախագահ Գույ Կլոսը, ճարտարապետ և պատմաբան Պաոլո Վիտտին, Պրո Պատրիմոնիո հիմնադրամի փոխնախագահ, Ռումինիայի մշակույթի նախարարության պետքարտուղար, ԵԽ մշակութային քաղաքականության փորձագետ և զեկուցող, Ռումինիայում Ֆուլբրայթ հանձնաժողովի գործադիր տնօրեն Մարիա Բերցան, Բելգրադի արվեստների համալսարանի Մշակութային քաղաքականության և կառավարման ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի վարիչ, Սերբիայում Եվրոպա Նոստրայի գլխավոր քարտուղար, Հարավարևելյան Եվրոպայի ժառանգության ցանցի և Բալկանյան թանգարանի, ԻԿՕՄ-ի և Քննական ժառանգության ուսումնասիրությունների ասոցիացիայի տնօրենների խորհրդի անդամ Վիշնյա Կիսիչը, արվեստաբանության թեկնածու, Էքս-Մարսել համալսարանի հայկական ուսումնասիրությունների դասախոս, LA3M-ի գիտաշխատող Պատրիկ Տոնապետյանը, երկրաբան Թյուդոր Բերցան, Միլանի պոլիտեխնիկական համալսարանի քաղաքային վերականգնման դոցենտ Մարիակրիստինա Ջամբրունոն, ճարտարապետ և Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնի Մշակութային ժառանգություն բաժնի պատասխանատու Գայանե Կազնատին:

2017 թ. Եվրոպական ներդրումների բանկ-ինստիտուտը հրապարակում է Հայաստանում Երերույքի հնավայրի և Անիպեմզա գյուղի պահպանության և բարելավման տեխնիկական և ֆինանսական հաշվետվությունը:

2018 թ. ՀՀ մշակույթի նախարարն տկն. Մակունցը փոխնախարար տկն. Ղարիբյանի հետ այցելում է հնավայր: Այս առիթով Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնն իրականացնում է մաքրման աշխատանքներ և վերաբացում է գյուղի Մշակույթի տունը և համագործակցելով Եվրոպա Նոստրայի փորձագետների հետ՝ թողարկում են տեղանքի զարգացման ծրագիր:

2018-19թթ Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գեոդեզիայի ամբիոնի վարիչ Սուրեն Թովմասյանի հետ ավարտում է տաճարի ճշգրիտ, քար առ քար հետազոտմանը համակարգումը:

2019 թ. ՌՕՔԵՄՓ-ի գիտական կոմիտեն, Գայանե Կազնատիի առաջարկով և Հայաստանի մշակույթի նախարարության համաձայնությամբ, Երերույքն ու Անիպեմզան ընտրում է, որպես ուսումնասիրությունների ծրագիր, Հայաստանում իր գործունեության ծավալման համար:

2019թ նոյեմբերին ՌՈՔԵՄՓ նախապատրաստում և ներկայացնում է Երերույքի տաճարի ամրակայման նախագիծը Ամերիկայի դեսպանատան մրցույթին: Նախագիծը չընտրվեց:

Վերոնշյալ բոլոր գործողությունները իրագործվել են չափազանց ցածր բյուջեյով, բայց մեծ խանդավառությամբ: Փորձագետների մեծ մասը ներգրավվել էին աշխատանքներին հասարակական հիմունքներով:

Սակավ ռեսուրսների պատճառով, իրագործվել է միայն ծայրահեղ անհրաժեշտ միջամտություններ, փլուզումը կանխելու համար: Երերույքի տաճարի առավելագույն պահպանության և այն անվտանգ հասարակությանը ներկայացնելու համար, անհրաժեշտ է իրականացնել կառուցվածքային հետազոտություններ, ամբողջացնել պահպանության նախագիծը և ստեղծել փոքր թանգարան կից Անիպեմզա գյուղում, արժեքավոր զարդաքանդակների պահպանման համար, որոնք փաստորեն քայքանման և գողության վտանգի տակ են:

Ըստ հայաստանյան չափանիշների գործողությունների ծախսերը հաշվարկվել են հետևյալ ձևով.

| | Չափման միավոր | Քանակ | Միավոր արժեք Եվրոյով | Ենթագումար Եվրոյով |
|---|---|---|---|---|
| Ճարտարապետ – Երերույքի տաճարի և փոքր դամաբարանի թաղերի ամրակայում- նախագծում և կարավարում - % հաշվարկը արվում է աշխատանքից | % | 10 | € 14.258,00 | € 14.258,00 |
| ճարտարագետ – միջազգային | օր | 20 | € 438,00 | € 8.760,00 |
| Կառույցի իրավիճակի գնահատման փորձագետ | Ընդի գում. | 1 | | € 1.000,00 |
| Անիպեմզայի մշակույթի տան վերականգնման և փոքրիկ թանգարանի ստեղծում, որտեղ կտեղադրեն արժեքավոր զարդաքանդակները Երերույքի հնավայրից - % հաշվարկը արվում է աշխատանքի արժեքից | % | 8 | € 4.000,00 | € 4.000,00 |
| թանգարանի տեխնիկական համակարգերի ճարտարագետ | Ընդի գում. | 1 | € 1.500,00 | € 1.500,00 |
| **ընդհանուր** | | | | **€ 29.518,00** |

CENTRO STUDI E DOCUMENTAZIONE DELLA CULTURA ARMENA

Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը ՌՈՔԵՄՓ ծրագրի հետ առաջարկում են ՀՀԿԳՄՍՆ-ին իրենց աջակցությունը, մինչև 30% համաֆինանսավորում:

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Ընդհանուր** | | | | **€ 29.518,00** |
| Համաֆինանսավորում ՌՈՔԵՄՓ ծրագիրով | | | | € 4.427,00 |
| Համաֆինանսավորում Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնով | | | | € 4.427,00 |
| **Ընդհանուր արժեքը պահանջվածից** | | | | **€ 20.664,00** |

Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը և ՌՈՔԵՄՓ-ը կհամակարգեն տեղական և միջազգային փորձագետներին, որոնք ընտրվել են՝ հիմնվելով նրանց ունակությունների և գիտելիքների վրա տվյալ հուշարձանների վերաբերյալ: 2016 թ ստեղծված գիտական կոմիտեն կվերահսկի աշխանտանքի յուրաքանչյուր ոլորտ: Քանի որ մենք ունենք ամբողջական, ճշգրիտ չափագրություններ, լուսանկարներ, տեսագրություններ և անցած տարիներին իրականացված հետազոտությունների ամբողջական փաթեթ, կարող ենք իրականացնել այս նախագիծը նաև այս ծանր իրավիճակում, երբ կորոնավիրուսի  բռնկման պատճառով չենք կարող այցելել Հայաստան: Այնուամենայնիվ որոշ գործողություններ դեռևս անհրաժեշտ են (էնդոսկոպիկ, հորատման, փոքր դամբարանի չափագրման և թվայանացման այլն ) և այն կիրականացնեն տեղի փորձագետները՝ տեղանք այցելելով:

Ինչ վերաբերվում է ժամկետներին, ապա մենք կկարողանանք տրամադրել ամբողջական գծագրային փաթեթը (զեկույց, գծագիր 1:50 մասշտաբով, ծավալների հաշվարկ, նախահաշվարկ) պայմանագրի ստորագրումից հետո՝ երկու ամսվա ընթացքում:

Հարգանքով՝

Գայանե Կազնատի

20145 Milano, via Cherubini 6 +39 335 8010108 – 30123 Venezia, Dorsoduro 1602 – 30123 (Italia)- CF 07872850156 ● P.IVA / VAT-No. IT02616820276